ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

,, 16 ,, հունիսի 2015թ. N 110-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Շառոյան Վ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ

Օհանյան Ս. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Հովհաննիսյան Բ.- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Նյութական պատասխանատու անձինք

Ալոյան Ռ. - հանձնող

Ղազարյան Գ. - ընդունող

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Վ. Շառոյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ